«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Արձանագրություն թիվ 1
28.09.2023 թ.

1. ՀԱԱՀ գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ

Հաստատել ՀԱԱՀ գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանը:

2. Համալսարանի ստորաբաժանումների 2022-2023 ուստարվա տարեկան հաշվետվությունների հաստատման վերաբերյալ

Հաստատել ՀԱԱՀ ուսումնական ստորաբաժանումների 2022-2023 ուստարվա տարեկան հաշվետվությունները.

- Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ,
- Ագրոնոմիական ֆակուլտետ,
- Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետ,
- Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ,
- Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետ,
- Ագրոբիզնեսի դեպարտամենտ,
- ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղ,
- ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղ,
- Շիրակի Մ. Թումանյանի անվան գ/տ քոլեջ մասնաճյուղ,
- Ա. Քոչինյանի անվան գ/տ քոլեջ,
- Հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարան:

3. Համալսարանի 2022-2023 ուստարվա ուսումնական գործընթացի արդյունքների ու խնդիրների վերաբերյալ

3.1. Ընդունել ի գիտություն

3.2. Հանձնարարել միջազգային կապերի դեպարտամենտի պետ Գ. Համբարձումյանին սեղմ ժամկետում մշակել ու Վ. Ուռուտյանին ներկայացնել օտար լեզվով մատուցվող առարկաների ցանկը և հանրայնացնել տվյալները:

3.3. Հանձնարարել միջազգային կապերի և կրթական բարեփոխումների աշխատանքների գծով պրոռեկտոր Մ. Մովսիսյանին՝ սեղմ ժամկետում ամփոփել, վերլուծել և հանրայնացնել ՀԱԱՀ վերջին տարիների շրջանավարտների ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ հավաքագրված տվյալները:

4. ՀԱԱՀ մեթոդական խորհրդի դրական կարծիքով գիտխորհրդի հաստատմանը ներկայացված մի շարք հարցերի վերաբերյալ

4.1. «Քիմիայի դասընթաց» I և II հատոր, ձեռնարկը (հեղինակ դոցենտ ք.գ.թ. Ռ.Ա. Քարիմյան) երաշխավորել հրատարակման:

4.2. Հաստատել ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի կողմից երաշխավորված 071804.00.6 ծածկագրով «Ագրարային ճարտարագիտություն» մասնագիտության «Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն» կրթական ծրագրի Ճարտարագիտության բակալավրիատի՝ 071804.02.6 և մագիստրատուրայի՝ 071804.02.7 մասնագիտական կրթական ծրագրերը:

4.3. Հաստատել միջին մասնագիտական կրթության դուալ ուսուցման ձևով «Կրտսեր ագրոնոմ» որակավորմամբ մասնագետի «Ագրոնոմիա» մասնագիտության ուսումնական պլանը:

4.4. Հաստատել ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի 2023-2024 ուստարվա առկա ուսուցման 3-րդ կուրսի «Գյուղատնտեսության էլիկտրիֆիկացիա և ավտոմատացում», «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» և «Փոխադրումների կազմակերպում և ՃԵԿ» կրթական ծրագրերով նախատեսված առարկաների կիսամյակային տեղափոխությունը: 5-րդ կիսամյակի «Գյուղատնտեսության էլիկտրիֆիկացիա և ավտոմատացում» կրթական ծրագրի «Ավտոմատիկա և տեխ. գործ. ավտոմատացում» առարկան, ինչպես նաև «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» և «Փոխադրումների կազմակերպում և ՃԵԿ» կրթական ծրագրերի «Մելիորատիվ մեքենաներ» առարկաները տեղափոխել 6-րդ կիսամյակ, իսկ նշված բոլոր կրթական ծրագրերի 6-րդ կիսամյակի «Ագրարային էկոնոմիկա և մենեջմենթ» առարկան տեղափոխել 5-րդ կիսամյակ:

5. ՀԱԱՀ գործող կանոնակարգերում առաջարկվող փոփոխությունների հաստատման հարցի վերաբերյալ

Հաստատել ՀԱԱՀ կանոնակարգերում առաջարկվող փոփոխությունները.

5.1. «Աշխատանքային կիսամյակի սկզբունքով պրակտիկայի կազմակերպման և անցկացման կանոնակարգ»-ի 1.1 կետի դրույթները փոփոխել և հաստատել հետևյալ խմբագրմամբ. «1.1. Սույն կանոնակարգով սահմանվում է ՀԱԱՀ-ում առկա ուսուցման աշխատանքային կիսամյակի սկզբունքով պրակտիկայի կազմակերպման և իրականացման կարգը»:

5.2. ՀԱԱՀ ֆակուլտետի կանոնակարգի 13-րդ հոդվածի դրույթները փոփոխել և հաստատել հետևյալ խմբագրմամբ. «Դեկանի տեղակալին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է համալսարանի ռեկտորը՝ պրոռեկտորի և դեկանի ներկայացմամբ»:

6. Հեռակա ուսուցման համակարգում ուսումնական կիսամյակի տևողությունը սահմանելու անհրաժեշտության հարցի վերաբերյալ

Հաստատել հեռակա ուսուցման համակարգի ուսումնական կիսամյակի տևողությունը.

➢ Հեռակա ուսուցման 1-ին կուրսի առաջին ուսումնական կիսամյակը սկսվում է այդ կուրս ընդունված ուսանողների հրամանագրման պահին և ավարտվում առաջին կանչի քննությունների վերահանձնման համար սահմանված վերջին օրը, եթե պետական կառավարման լիազոր մարմնի կողմից չկա սահմանված այլ ժամկետ:

➢ Հեռակա ուսուցման 1-ին կուրսի երկրորդ կիսամյակը և դրան հաջորդող բոլոր ուսումնական կիսամյակները սկսվում են տվյալ կիսամյակի կանչի մեկնարկին նախորդող շաբաթից և ավարտվում տվյալ կանչի քննությունների վերահանձնման համար սահմանված վերջին օրը, եթե պետական կառավարման լիազոր մարմնի կողմից չկա սահմանված այլ ժամկետ:

7. ՀԱԱՀ-ում կառուցվածքային փոփոխություններ կատարելու անհրաժեշտության հարցի վերաբերյալ

7.1. ՀԱԱՀ անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետում առարկաների քիչ տեղափոխությամբ պահպանել «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն, սննդամթերքի անվտանգություն և հիգիենա», «Մորֆոլոգիա և կենդանագիտություն» ամբիոնները:

Միավորել «Թերապիա, վիրաբուժություն և ծննդագիտություն» և «Համաճարակաբանություն և մակաբուծաբանություն» ամբիոններն ու ձևավորել «Անասնաբուժության» ամբիոն:

7.2. Միավորել ՀԱԱՀ ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Կենսագործունեության անվտանգություն» ու «Գյուղատնտեսական մեքենաշինություն, ավտոմատացում և տեխնիկայի շահագործում» ամբիոնները և ձևավորել «Մեքենասարքավորումների ճարտարագիտության և տեխնիկական անվտանգության» ամբիոն:

7.3. Առաջարկությամբ դիմել ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդին՝ հաստատելու ՀԱԱՀ գիտական խորհրդի որոշումը:

8. ՀԱԱՀ պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնում Գալուստ Վարդանի Պետրոսյանին որպես հայցորդ ձևակերպելու, ատենախոսական աշխատանքի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ

8.1. Գալուստ Վարդանի Պետրոսյանին ձևակերպել որպես հայցորդ պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնում:

8.2. Թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեման հաստատել «Բուսական ծագման այլընտրանքային հումքատեսակների կիրառմամբ հրուշակեղենի արտադրության նոր տեխնոլոգիաների մշակում» անվանումով՝ Ե.18.01 - «Բուսական և

կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

8.3. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Նարինե Գեղամի Հովհաննիսյանին:

9. ՀԱԱՀ պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնում Նվարդ Սպարտակի Մկրտչյանին որպես հայցորդ ձևակերպելու, ատենախոսական աշխատանքի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ

9.1. Նվարդ Սպարտակի Մկրտչյանին ձևակերպել որպես հայցորդ պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնում:

9.2. Թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեման հաստատել «Սպիտակուցային հավելումների օգտագործմամբ չանախ պանրի արտադրության տեխնոլոգիայի կատարելագործում» անվանումով՝ Ե.18.01 - «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

9.3. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Արմենի Աղաբաբյանին:

10. ՀԱԱՀ անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի մորֆոլոգիայի և կենդանագիտության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Միքայել Ջոնիկի Միքայելյանի ատենախոսական աշխատանքի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ

10.1. ՀԱԱՀ անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի մորֆոլոգիայի և կենդանագիտության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Միքայել Ջոնիկի Միքայելյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեման հաստատել «Նոր սերնդի պրոբիոտիկների ազդեցությունը հավերի հիվանդածին բակտերիաների դեմ» անվանումով՝ ԺՁ.00.01 - «Անասնաբուժություն» մասնագիտությամբ:

10.2. Աշխատանքի գիտական ղեկավար հաստատել կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աստղիկ Զավենի Փեփոյանին:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ